[1] Դուրս գրման ամսաթիվ			**Հարկային հաշիվ** (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
26	Հունիս	2019 թ.		Ա	6948132661
[4] Մատակարարման ամսաթիվ				Ճշգրտվող հաշվի	
26	Հունիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	1	5	0	3	4	4	8		
[9] Անվանումը	«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» Հիմնադրամ									
[10] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	1	5	0	3	4	4	8	/	1
[11] Բանկային տվյալները	Հայբիզնեսբանկ ՓԲԸ			N 11500166513800						
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Կորյունի 2									
[13] Լրացուցիչ տվյալներ										

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3		
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը										
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ									
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն			N 900011000834						
[18] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5									
[19] Լրացուցիչ տվյալներ										
[20] Ռում միջոցով	Անուն, ազգանուն									
	Լիազորագիր	Համար								
		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (քանակաչափը)	Միավորի գինը	Ցեղ(%)	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումար	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	12103019 դատահոգեբանական փորձաքննություն	հատ	1	32833.33		32833.33	20	6566.67	39400
Ընդամենը						32833.33	X	6566.67	39400

Դուրս գրող PARSEGHYAN LARISA 6808700354
անունը, ազգանունը

26/06/2019 14:45:48

Ստացող

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն նշանակելու մասին

01 ը ապրիլի 2019թ. քաղաք Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, երրորդ դասի խորհրդական Վ.Կ.Սեդրոյանս, վերանայելով վարույթիս թիվ 12103019 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2019թ. փետրվարի 19-ին՝ ժամը 04:35-ին, «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ «կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վերքեր, ծախակողմյան պնևմաթորաքս» ախտորոշմամբ շտապօգնության թիվ 43-րդ խումբն իրենց մոտ է տեղափոխել 1985թ. ծնված Սևակ Ժիրայրի Սարգսյանին, ով հայտարարել է, որ մարմնական վնասվածքներ է ստացել կայարանում տեղի ունեցած վիճաբանության ժամանակ:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում 2019թ. փետրվարի 19-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12103019 քրեական գործը, ընդունվել է վարույթ:

Քրեական գործի լրիվության և բազմակողմանի քննությունն ապահովելու նպատակով քրեական գործի նախաքննությունը հանձնարարել մի քանի քննիչների, որը քննչական խմբի ղեկավարի կողմից ընդունվել է վարույթ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2019 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 00:30-ի սահմաններում, Երևան քաղաքի Միչուրին փողոցի 8-րդ հասցեում գտնվող տանը կայացած խնջույքի ժամանակ Սևակ Սարգսյանի և նույն խնջույքի մասնակից Արշավիր Դավթյանի միջև կենցաղային հարցերի շուրջ ծագել է վիճաբանություն, որի ընթացքում Արշավիր Դավթյանն իր մոտ եղած դանակի միջոցով դիտավորությամբ հարվածներ է հասցրել Սևակ Սարգսյանին՝ վերջինիս առողջությանը պատճառելով «կրծքավանդակի ձախ կեսի կտրած-ծակած թափանցող վնասվածքների, ձախակողմյան պնևմաթորաքսի» ձևով մարմնական վնասվածքներ: Պարզվել է նաև, որ ծագած վիճաբանության ժամանակ խնջույքի մասնակիցներից ներկա է եղել միայն Տիգրան Արարատի Սարգսյանը, ով տեղի ունեցածին ականատես է եղել:

Քրեական գործով տուժող է ճանաչվել Սևակ Ժիրայրի Սարգսյանը, ով ցուցմունք է տվել այն մասին, որ 2019 թվականի փետրվարի 19-ի երեկոյան Երևան քաղաքի Միչուրինի փողոցի 8-րդ հասցեում գտնվող տանը կայացած խնջույքի ժամանակ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանել է խնջույքի մասնակից Արշավիր Դավթյանի հետ, քաշքշել և փոխադարձ հարվածներ են հասցրել միմյանց, որի հետևանքով ընկել է հյուրասենյակի հատակին: Երբ ոտքի է կանգնել, Արշավիր Դավթյանը փաթաթվել է իրեն և այդ պահին մարմնի ձախ կողային հատվածում մի քանի ծակոց է զգացել, որի հետևանքով ինքնազգացողությունը վատացել է, նկատել է, որ կողքի հատվածից

արյունահոսում է: Տիգրան Սարգսյանը, ով ներկա է եղել վիճաբանության ողջ ընթացքին, իրենից հեռվացրել է Արշավիր Սարգսյանին, իսկ վերջինս դիմել է փախուստի: Բացի Տիգրան Սարգսյանից, վիճաբանությանը այլ անձ ներկա չի եղել, քանի որ խնջույքի մյուս մասնակիցները մինչ այդ հեռացել էին:

2019 թվականի փետրվարի 19-ին գործով վկա Տիգրան Արարատի Սարգսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ 2019 թվականի փետրվարի 19-ի երեկոյան, հարազատների և ընկերների հետ խնջույքի մասնակցելու նպատակով հավաքվել են տատիկի՝ Հասմիկ Քալաջյանի Երևան քաղաքի Միչուրինի փողոցի 8-րդ հասցեում գտնվող տանը: Ժամը 23:00-ի սահմաններում, կանայք և աղջիկները գնացել են իրեն պատկանող և անմիջապես հարևանությամբ գտնվող տուն, իսկ ինքը, հորեղբոր որդի Սևակ Սարգսյանի և եղբայր Հայկ Սարգսյանի հետ շարունակել են խնջույքը: Ժամը 23:30-ի սահմաններում, իրենց է միացել հարևանությամբ բնակվող Արշավիր Դավթյանը և միասին մի քանի բաժակ օղի խմելուց հետո վերջինիս և Սևակ Սարգսյանի միջև կենցաղային հարցերի շուրջ ծագել է վիճաբանություն, որն իր միջամտությամբ դադարել է: Սակայն 10 րոպե անց, նրանց միջև կրկին շարունակվել է վիճաբանությունը, որի ընթացքում վերջիններս քաշքշել են միմյանց, ընկել են տան հյուրասենյակի հատակին և այդ պահին Սևակ Սարգսյանը բացականչել է, որ շունչը կտրվում է, իսկ երբ փորձել է օգնել նրան, նկատել է, որ Սևակ Սարգսյանի կողքի հատվածից արյունահոսում է: Նույն ժամանակ սաստելու նպատակով մեկ անգամ բռունցքով հարվածել է Արշավիր Դավթյանին, ով անմիջապես հեռացել է այդտեղից: Սևակի Սարգսյանի կողքին՝ տան հյուրասենյակի հատակին, ընկած է եղել արյունոտ դանակ, որը վերցրել է, փաթեթավորել է անձեռոցիկների մեջ և դրել ջինսե տաբատի հետևի ձախ գրպանում: Այնուհետև գրկել է նրան, տեղափոխել տան դիմաց կայանված, իր անձնական օգտագործման «BMW 528» մակնիշի 36 AN 198 համարանիշի ավտոմեքենայի սրահ և վերջինիս տեղափոխել «Մուրացան» պոլիկլինիկա, որտեղից էլ նրան տեղափոխել են «Էրեբունի» բժշկական կենտրոն: Իր կողմից դեպքի վայրից վերցված և տաբատի գրպանում պահած արնանման հետքեր պարունակող դանակը մինչ հիվանդանոց գնալը անորոշ պայմաններում՝ գրպանից ընկնելու կամ ինչ-որ մեկի կողմից այն վերցնելու հետևանքով, անհետացել է: Հայտնել է նաև, որ Արշավիր Դավթյանի և Սևակ Սարգսյանի միջև տեղի ունեցած վիճաբանության և դրա հետևանքով Սևակ Սարգսյանին մարմնական վնասվածքներ պատճառվելու հանգամանքին ներկա է եղել միայն ինքը, այլ անձինք չեն եղել, քանի որ մյուսները նախքան վիճաբանությունը հեռացել էին նշված տանից:

Նույն օրը, վերը նշված հանցավոր արարքը կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել 08.08.1998թ. ծնված Արշավիր Արմենի Դավթյանը, ով ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանրորեն վտանգավոր արարք կատարելու կասկածանքով ձերբակալվել է: Կասկածյալ Արշավիր Դավթյանը հրաժարվել է ցուցմունք տալ և պատասխանել առաջադրված հարցերին:

Բավարար ապացույցների համակցությամբ 2019 թվականի փետրվարի 21-ին Արշավիր Արմենի Դավթյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով և որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Արշավիր Դավթյանը գտնվում է «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկում:

Առաջադրված մեղադրանքում Արշավիր Դավթյանը իրեն մեղավոր չի ճանաչել:

ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն ՓԲ ընկերությունից ստացված գրության համաձայն՝ Արշավիր Արմենի Դավթյանը ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան

առողջության կենտրոն ՓԲԸ-ում հաշվառված է 07.03.2017 թվականից «Անձի հիստերիկ խանգարում» ախտորոշմամբ:

Քրեական գործով մեղադրյալ Արշավիր Դավթյանը դեպքի ընթացքում հոգեկան խիստ հուզմունքի վիճակում գտնվելու հարցը պարզելու համար վերջինիս պաշտպան՝ Թեհմինե Հովսեփյանը վարույթ իրականացնող մարմին միջնորդություն է ներկայացրել դատահոգեբանական փորձաքննություն նշանակելու մասին, որը վարույթ իրականացնող մարմնի կողմից բավարավել է:

ՀՀ ՊՆ թիվ 4 զինվորական կոմիսարիատից առգրավվել է մեղադրյալ Արշավիր Դավթյանի անձնական գործը, որի ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերջինիս մոտ ախտորոշվել է «Անձի հիստերիկ խանգարում»:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Արշավիր Արմենի Դավթյանի հոգեկան վիճակը պարզելու համար անհրաժեշտություն է առաջացել նշանակել ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243 244-րդ, 246-րդ, 248-րդ և 250-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով նշանակել ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ ԱՆ կից միջգերատեսչական ստացիոնար դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովին և Մ.Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի մասնագետներին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Մեղադրյալ Արշավիր Արմենի Դավթյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է կամ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչ հիվանդությամբ և երբվանից:

բ/ Եթե Արշավիր Արմենի Դավթյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա նա այդ հիվանդությամբ հանցավոր արարք կատարելու պահին և ներկայումս ունակ էր հաշիվ տալ և ղեկավարել իր գործողությունները:

գ/ Մեղադրյալ Արշավիր Արմենի Դավթյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե՝ անմեղսունակ:

դ/ Արշավիր Արմենի Դավթյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ: Եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում:

ե/ Ներկա հոգեկան վիճակով Արշավիր Արմենի Դավթյանը կարող է կանգնել քննության և դատարանի առաջ, թե ոչ:

է/ Մեղադրյալ Արշավիր Արմենի Դավթյանը կոնկրետ հանցավոր արարքը կատարելու պահին հոգեկան խիստ հուզմունքի /աֆեկտի/ վիճակում գտնվել է, թե ոչ, եթե այո, ապա այն զրկել է արդյոք մեղադրյալին ամբողջությամբ իր գործողության վտանգավորությունը գիտակցելուց և դա ղեկավարելուց:

ը/ Մեղադրյալ Արշավիր Արմենի Դավթյանը դեպքի ընթացքում գտնվել է արդյոք հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, թե ոչ, եթե այո, ապա ինչի հետևանքով է այդ վիճակը առաջացել:

3. Փորձագետին իրավունք վերապահել և խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև նշված չեն սույն որոշման մեջ, սակայն հարաբերակցվում

փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4.Փորձագետներին պարզաբանել << քրեական դատավարության օրենսգրքի 85 րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները: Միաժամանակ փորձագետներին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար << քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

5.Փորձագետներին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

6.Փորձաքննություն կատարելու համար փորձագետներին տրամադրել սույն որոշման մեկ օրինակը, ապահովել մեղադրյալի ներկայությունը փորձաքննությանը, իսկ պահանջի դեպքում նաև քրեական գործը:

Վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ՝ **Վ.Կ. Սեդոյան**